3. Բարեկամական հարաբերությունների հաստատումը և զարգացումը Սովետական Ռուսաստանի, Ադրբեջանի և Արաստանի սովետական կառավարությունների հետ: 1

4. Հանուն ինքերիպիզմի լծից Արևելքի ազատագրմանը՝ պարսկական սեպարտիզմի հենյույժ է Ռուսաստանի, Ադրբեջանի և Արաստանի սովետական կառավարությունների նյութական օժանդակության վրա: 1

5. Թույլ չափ օտարերկրյա որևէ միջամտություն Պարսկաստանի ներքին, քաղաքական գործերին և Պարսկաստանի սեպարտիզմին: 1

Այս համաձայնությունից հետո տեղից նոր կառավարություն, և օգտատուի 4-ին Գիլանը հայտարարվեց Սովետական սեպարտիզմի նոր կառավարության գլուխը նորից կանգնեց Քուշիկ խանը: 1

Բայց այդ համաձայնությունը կայուն չեղավ՝ շուտով նոր պարմաններով, հատկապես թեհրանի կառավարության ճնշման ներքո, առաջ եկավ խորը պատկոտում, որը և ամբողջ շարժումը տարավ վերջնական առաջաման: Այդ պարմաններում Քուշիկ խանը վերջնականապես զավաճանեց սեպարտիզմը՝ նա դեմ դրա եկավ սեպարտիզմի արմատական թեհրանների անցկացնելուն, հատկապես ազրաբային սեպարտիզմին և կալվածատերերի հողերի բռնագրավմանը: Քուշիկ խանը միջև իսկ գտնում էր, որ մամուլում չպետք է տպագրել այնպիսի խիստ հոգվածներ, որոնք արամադություններ են սրում ինքերիպիստների և շահի սեպարտիզմի կառավարության դեմ: Ահա հենց այս շրջանում է, որ Քուշիկ խանը ամբողջովին ընկնում է սեպարտիզմի գիրկը: Հայտնի են հատկապես անդիլական ինքերիպիստների գործակալ Շեյխ Ահմեդ Սիլաբիի ջանքերը Քուշիկ խանին այնպիսի մտքեր ներշնչելու գործում, որ խոր ավալ գեղքում նա միայն գոր-

1 «Правда», 1921, 14 января.

1 ЦГАКА, ф. 193, оп. 3, а. 773, л. 134.

միջ և հանգիստն առ կամունիստների մեղքում և որ հաղթահարեց հետո կամունիստները նրա հետ զատաստան կանանեմ և ալլն: Այդ ամենը հասցրին այն բանին, որ Քաշիկ խանը բացահայտ պայքար սկսեց կամունիստների դեմ: Սեպտեմբերի 29-ին նա Հեղափոխական և մյուս զինվորային կամունիստներին Ֆումեն հրավիրեց, որտեղ նրա մարդիկ, նախապես պատրաստված ծրագրի համաձայն, հրկիզեցին կամունիստների իշխանած սուրը:

Այնուհետև հոկտեմբերի մեկի զինչերը Քաշիկ խանի առեւրը հարձակեցին Ռաշտում դաժնագ կամպարտիայի Կենտրոնի շինքի վրա, սպանեցին մի շարք զինվորային կամունիստների, իսկ մյուսներին տարան անասու: Մյուս օրը քաղաքի կենտրոնական հրապարակում Մարզի մեղքանում Քաշիկ խանի կողմնակիցները միտինգ կազմակերպեցին, որտեղ նա և իր կոմիտարներից Միրզա Մահմադովն ճառեր արտասանեցին և բնակչությանը շնորհատրեցին քաղաքը կամունիստներից ազատագրելու համար¹:

Մերկացնելով Քաշիկ խանի դավաճանությունը, հոկտեմբերի 12-ին Ռաշտում հրապարակված մի պրոկլամացիայում ասվում էր. «Սրապիտով հայտարարում ենք մոզոլորդին, որ Իրանի պատիվը արտառոտորդ Քաշիկ խանը և նրա կողմնակիցները հակառակույցներն, դավաճան և մարդատիրական իրավունքները խախտագին են: Այսօրվանից նրանց անուղիտ կըլինե՞լին սեռլայցիտներնրի ցուցակից և նրանք հայտնի կդասանան միտին շանդաջի սովզակներ անուղիտ: Ը՛վ որ օդի Քաշիկ խանին և նրա կողմնակիցներին, կհամարվի հակառակույցիտներ և նույնպիսի արկածանիզի, ինչպիսին նա է՞:»

Անս արը ժամանակ էր, որ Թեհրանի սեպեցիտն կտափարտիվանը հարձակման անցյով Գիլանի շարժման դեմ: Ռաշտի պաշտպանությունը կազմակերպելու ուղղությամբ Քաշիկ խանի թուր շանքերը ի զեքե անցան: Նրա շոխանները արդեն բարոյալքվի էին: Ռիզա խանը, որը հետագայում զարձակվ Իրանի միսալետ շահը, հարձակման անցնելով ջարհ-

ջախեց շանդաջիներին և զրափեց քաղաքը: Քաշիկ խանը հաղիվ կարողացավ փախչել սեպե լինները, որտեղ որոշ ժամանակ թափառեցայց հետո, կտափարտեան զորքերի հետապնդումից փախչելով, ձեռնովս տաստիկ ցրտերից ստակը: Անցորդները նրա ստած մարմինը գտնելով, կտափարտեթյան խոտտացած վարձատրությունը ստանալու համար զուեթը կարեցին և ներկայացրին Ռիզա խանին, որի հրամանով կտրված գլուխը մի քանի օր շարունակ դրված էր քաղաքի հրապարակում:

Ռիզա խանը դաժան զատաստան տեսավ Գիլանի սեռլայցիտներնրի հետ: Հազարավոր մարտիկներ ձերբակալեցին և մեծ թվով մարդիկ կախապան բարձրացվեցին:

* * *

Այժմ տեսնենք, թե ի՞նչ էր կատարվում Թեհրանում, ի՞նչպես և ու՞մ կողմից էին ծրայվում ամբողջ Իրանում սպգային-աջատարական շարժումները ճնշելու և սեպեցիտն, հակասոփեսական կատափարտիվան տաղծելու պլանները:

1921 թ. փետրվարի 21-ին սեպի անեցած զինվորական հեղաշրջումը Իրանում հայտնի է որպես «Քուպեթայի սեռում և Էսֆանդ» (Էսֆանդ 3-ի սեռական հեղաշրջում): Այդ հեղաշրջումը հակախանի գերակառայի անսրեկ և զարմիկ իրանական պատմապախման մեջ, որոշ քաղաքական գործիչներ և պատմաբաններ փորձել են այս կամ այն պատճառաբանումով քղաքվիկ հեղաշրջման միջոցով որսալի ներստանների համեմու իմպերիալիստների պլանները: Այդ սեպեկտայի հատկապես աշքի է ընկնում էր կողմից արդեն նշված Մեհդի Մոթեհանգին, որը իր «Իրանը և Անդլիսան» աշխատության մեջ փորձում է պաշտպանություն տակ տանել անդլիսական իմպերիալիստների քաղաքականությունը: Մոթեհանգին նշում է, որ «Անդլիսան ուղամ էր Իրանում իր շահերը պահպանել և Իրանը Մոսկովայի ազդեցության տակ շոխանելու: Իսկ Անդլիսան, հեղեմակի կարծիքով, այդ լանը կարող էր անել երեք եղանակով. կամ պեռք է իր զորքերը Իրանում պահեր, որը նոր պայմաններում հնարավոր չէր

¹ Հախիական ՍՍԻՍ ՊԿԱ, ք. 40С/114, գ. 179, էջ 112:

² Նույն տեղում, էջ 138:

կամ պետք է Իրանի հետ համապատասխան պայմանագիր կնքեր, որը նույնպես անհաջողություն մատնից¹ և կամ Եանուզղանի որոնք ամբողջովս իրեն ենթակա կենտրոնական կառավարությունը²։

Բայց հետաքրքիր այն է, որ նախքան Իրանի նկատմամբ անգլիական իմպերիալիստների վարած քաղաքականությունը իր պաշտպանության տակ վերցնելը, Մոջեմանդին ստիպված է խուսափանել հետևյալը. «Համարյա ամբողջ կենտրոնացիան այն կարծիքին է, որ 1299 թ. էսֆանդի կռիվի հեղաշրջումը անգլիացիների կորզազրույթյամբ սկզբից և իրականացավ, որ Սեյիդ Ջիա էդ-Դինը և Ռիզախանը անգլիական պաշտոնյաների հրամանների կատարածունքն են եղել։ Նրանք տարած են, որ անգլիական կառավարությունը կամենի՞ր ի տարածման առաջն. ասնելու համար ուզում էր Իրանում գրեթե իշխանություն ստեղծել, և որպեսզի բնական հեղաշրջում առաջ չգա, արձանական հեղաշրջում կազմակերպեց և Լոնդոնում նախապատրաստված հեղաշրջումը պարտադրեց Իրանինը ... Անգլիացիները երբ ականա, որ 1919 թ. պայմանագիրը իրանցիների դիմադրությունն է հանդիպել, պայմանագրի բովանդակությունը ուրիշ ձևով և պակաս ծախսով Իրանի ժողովրդի հաշվին իրականացրին»³։

Ինչպես երևում է Մոջեմանդու վերաբերյալ խոսքերից, իրանական դորմիցների և պատմաբանների գերակշռող մասը հեղաշրջումը և նրա հետ կապված իրադարձությունները զբնականաբար է որպես անգլիական իմպերիալիստների մեքենայությունների արդյունք և նրանց քաղաքականության բաղադրացի է մասը։

Մենք այստեղ կբնորոշենք այդ հեղաշրջման պատմության հետ կապված միայն մի քանի հարցեր։

Հեղաշրջում կազմակերպելու գործում հիմնական դեր խաղաց իրանական բանակը Բանակի համեմատաբար կազմա-

կերպված և որեւէ ուժ ներկայացնող մասը շահի կամ կողակալին զիջիլիան էր, որի հրամանատարական կազմը հիմնականում ցարական զինվորականներ էին։ Դիվիզիան բաժանվում էր մի շարք շոկանների, որից ամենամեծը Քեհրանի շոկանն էր⁴, բաղկացած մոտ 3500 մարդուց⁵։ Դիվիզիայի հրամանատարը այդ ժամանակ գեդապետ Մուստաֆալին էր։

Անգլիացիների առաջին դործը կապված զիջիլիայի հրամանատարությունից ուսս զինվորականներին հետացնելը և իրենց հրամանատարներին նշանակելը։ Բայց այս քաղաքի իրականացումը հարիժ ու խաղաղ անցավ։ Բանը նրանում է, որ ժամանակի պրեմիեր մինիստր Մուշիր էյ-Պուլին ընդգիծացավ այդ փոփոխությունը։ Ինչքանը հետևյալ կերպ ընկալեցան. Քեհրանում անգլիական գեպանը իրանական կառավարությունից պահանջեց կողակալին զիջիլիայից հեռացնել ուսս զինվորականներին։ Այդ առաջարկը պատճառարանվում էր մի շարք փաստորոշումներով, այդ թվում և նրանով, որ իբր ուսս զինվորականների թվաքանակը կամ զավանակության հետևանքով կողակալները երկու անգամ էլ ավելացրին ևս ենթակից Ռաշտը, անհրաժեշտ դիմադրություն ցույց չեն ավել տուլլալիստներին մինչև իսկ այն պեղածում, երբ վերջիններս ոչ մի նպատակ ևս համարվում չեն ձեռնարկել, անգամ կողակալները հետագու են անգլիական զորքերից, որոնք սակազրված են եղել Ռաշտից երևումն մղոն հեռավորության վրա։ Ահա այսպիսի պատճառարանումներով անգլիացիները պահանջում էին հետացնել ուսս հրամանատարներին, նրանք փոխարեն նշանակել պարսիկներին, որոնց ժրխեց խորհուրդներով կոզնեն անգլիական զինվորականները⁶։ Անգլիան իր այս պահանջները շրակակառնելու գեպյում պատճառում էր դադարեցնել զիջիլիան պահելու համար յուրաքանչյուր ամիս հավաքվող գումարի վճարումը⁷։

¹ IFFAKA, փ. 195, on. 3, և. 574, 3.

² IFFAKA, փ. 195, on. 3, և. 1003, և. 17.

³ Դիվիզիայի ծախսերը հարյուր հազար այդ ժամանակ անգլիացիները ապիւս էին ամսական հարյուր հազար թուամսու (Documents on British Foreign Policy 1919—1939, First series, vol. IV, 1919, London, 1952, էջ 1180)։

¹ مهدي عجمدی ایران و انگلیس تیران ۱۹۴۷ (Մեհդի Բոջբանեդի, Իրանը և Անգլիան, Քեհրան, 1947, էջ 142)։

² Նույն տեղում, էջ 122։

Մշիբը էդ-Պոլիկի կառավարությունը շենթարիվեց անգլիացիներին և տարված կզավ հրամարական ապր: Բնական է, որ անգլիացիներին կողմից արգելախի պահանջներ դնելը Իրանի ներքին գործերին ուղղակի միջամտություն էր նշանակում: Այս զեպքերի կապակցությամբ Համաձայնքների պայտատամ Անգլիայի արտաքին գործերի միխիտարի տեղակալին հարցնում են, թե արդարք Իրանում տառաջացած վերջին կառավարական նցնեմամբ իրանական բանակի հետ կապված հարցերում բրիտանական զեպպանի միջամտության հետևանք չէ: Մի-հիտարի անգլակը Հարմաֆորտը պատասխանում է, որ իրանական կառավարությունը չցանկանում իրականացնել շահի որոշումը՝ իրանական կողակալին զիվիզիայի հրամանատարությունից ոտսական զինվորականներին հեռացնելու վերաբերյալ, հետևաբար և տեղի սենեցան արդ զեպքերը:

Գնահատելով վերոհիշյալ նարց ու պատասխանը, Բալֆուրը նշում է, որ արգելախի անգլիական կառավարությունը: ցանկանում էր պնդել, թե զեպպանի պահանջը ոչ մի կապ չունի կառավարության հրամարականի հետ, «մինչև հենց զա էր իսկական պատճառը»: Ինչ վերաբերում է անգլիացիներին ախ մեղադրանքին, թե իբր կողակները «չայտահանարար» հեռացել էին Ռաշտից, ապա Բալֆուրը վկայում է, որ լալիտրեն աարածված էր ախ կործիքը, թե շիղակիների նահանջը բրիտանական խաղի արդյունք էր²:

Անգլիական իմպերիալիստների այլ մեքենայությունները վերջապես հաջողությամբ պատկիցեին և զիվիզիայի հրամանատարությունից հեռացվեցին սես զինվորականները: Դիվիզիան իրենց հակադրության տակ վերացնելով, անգլիացիները սկսեցին նախադարձիկ ազգական հեղաշրջում: Այդ գործի իրականացնողը, կազմակերպողը և ողհենչողը հանգիտացավ հայտնի անգլիական գործակալ Սելիվը Զիա էդ-Դինը, անգլիացիների կողմից ֆինանսավորվող «Ռաազ» թերթի խմբագիրը: Որ նա իսկապես անգլիական գործա-

կալ էր՝ հաստատում են մի շարք փաստեր: Իրանական ախանջոր քաղաքական գործիչ զոկտոր Մասադիկը 1913 թ. մարտին մեջլիսում արասանամ իր նստում սակ է. «Սելիվը Զիա էդ-Դինը ոչ սեֆորմատար էր, ոչ էլ սեռլայցիաներ, այլ պարզորեն գործակալ...: Նա, ով նրան իշխանություն զլուխ րեքեց, ինչն էլ նրան հեռացրեց, հենց որ նա զպարտեց ոգտակար լինելուց»:

Հայաստանի զաշնակցական կառավարության ներկայացուցիչը Թեհրանում Արդությանը, 1920 թ. փետրվարի 16-ին երևան ուղարկած իր զեկուցման մեջ նույնպես գրել է. «Զիա էդ-Դինը ազնիցեիկ հատարական գործիչ է, «Ռասազ» թերթի խմբագիրը, վարչապետի վասաևությունը վալելուց և անգլիական քաղաքականության շեքով կոլլիմակից»:³ Իսկ Բարսուկազարկած մի այլ նամական Արդությանը գրել է. «Գարսուկազանի զերեզցիային նախապես Սելիվը Զիան վերադարձավ Թեհրան, թեպես զեոես շենք սեռնվել, բայց զիտեմ, որ զես բավական մամանակ մնալու է Թեհրանում: Նա խիտս կոլլիմակիցներից մեկն է վարչապետ Վասազ-Պոլիկի ներկա քաղաքականությունը, որի զեմ պարտեց քաղաքական և հասարակական շրջաններում մղվում է ուժեղ պալլար: Բալիական է, որ ներկա Ռուսաստանը—րուլիգիմը մի քիչ մասնեա Գարսուկազանին և թուլանա անգլիական ազդեցությունը, Վասազը մնալ իր պաշտոնում այլես չի կարող և ո՛վ է խմանամ ո՛ր հոսանքը և անձը իր ձեռքն ստնի քաղաքական զերեք»:

Բայց անգլիական իմպերիալիստները, ինարկի, շատ լավ զիտեին ո՛ր հոսանքը և ո՛ր անձը պիտի քաղաքական զեկը իր ձեռքը վերցնի:

Իրանական մամանակից քաղաքական գործիչ և պատմարան Հոսեյն Մաքբին իր «Իրանի ցասանալա պատմությունը» աշխատության մեջ հանգամանորեն քննարկման է ենթարկել հեղաշրջման ամբողջ պատմությունը: Իրանում կենտրոնացված ուժեղ անգլոֆոն կառավարություն ստեղծե-

¹ J. M. Balfour... էջ 204:

² Նույն սեղումը:

³ «Правда», 1946, 20 ամար.

² Հայկական ՍՍԲ՝ ԳԳԱ, ֆ. 68/260, գ. 457, էջ 114:

³ Նույն սեղումը, էջ 141:

լու՝ իմպերիալիստների քաղաքականության մասին խոսելով։
Մաքքին գրում է. «Այդ ժամանակ Լոնդոնի քաղաքականու-
թյանը ձևաձևով եղավ կասպից ծովի ափերը ալիքների
հետ Իրանի ափերը հասած մասալեր ունեզ ազդեցութեան
առաջն առնելու համար մի զորեղ իշխանություն ստեղծելը»։
Այդ նպատակին հասնելու համար, շարժակալում է Մաքքին,
Անգլիան ստիպված եղավ իր նախկին քաղաքականությանից,
այսինքն՝ Իրանում սֆինդոպոլիտիստ արժեքամոթության պահպա-
նումից հրաժարվել։ «Նկղաշրջումը,—գրում է հեղինակը,—
հաստատուպես և առանց սրել կատակի Լոնդոնում էր կազ-
մակերպվել։ Լոնդոնը հեղաշրջում անցկացնելու համար մի
կանոնավոր և լայնածավալ ապարատ էր ստեղծել և, Արևելքում
առարկող Լոնդոնի ընդհանուր քաղաքականության համաձայն,
ընդարձակ ծրագիր էր մշակել... և այն բանից հետո, երբ մի
քանի հողի այդ արդյուղիտն խաղալու թեկնածու դարձան,
Սելիգ Ջիսկեյ-Դինը պոլի է հովանավորյան արժանացավ և
հրան հանձնարարեցին հեղաշրջման գլխավոր դերը խաղալ»։
Մաքքին պատմում է, թե ինչպես հետագայում իրանական
մամուլում գիտնուխա էր գնամ հեղաշրջման կազմակերպչի
ինքնության մասին։ Հայտնի է, որ պատասխանելով մամուլին
Ռիզա խանը հարատարակել է. «Արդյուք ծիծաղելիք չէ իմ ներկա-
յության դեպքում հեղաշրջման իտական հեղինակին փնտրել»։
«Նեխալի Իրանն թեթև թեթև, պատասխանելով Ռիզա խանի այլ
հարտարարությունը, պոլ է. «Նկղաշրջման իրականացնողը
դու չեիր, այլ անդղիտայիններն ու Նուրաթ էդ-Դոլեն էին։ Եթե
դու այդ քալին շամաձայնիիր, մի արիշ պնտարական
կրեթին»¹։

Իսկ ո՞վ էր Նուրաթ էդ-Դոլեն, որի մասին նշում է
թեթևը Բանաթը այդ մասին հարտրում էր, որ Նուրաթ էդ-
Դոլեն Վրասալ էդ-Դոլեի կուսավարության արտաքին գործերի
մինիստրն էր և նվրոպայում եղած ժամանակ անգղիացիների
հետ ծրագրել էր հեղաշրջման պլանները։ Նա շտապ կերպով
վերադառնում է Իրան հեղաշրջումը կազմակերպելու և գլխա-

վարելու համար, բայց Համադանի ու Դազիլիի միջև ընկած
ճանապարհը իսկ լինելու հետանցով, ուշանում է, իսկ թե-
րանում անգլիական հրոպատո Նովարքը, որը Նուրաթ էդ-
Դոլեի հետ վատ հարաբերությունների մեջ էր, ստիպից օտը-
վելով, Սելիգ Ջիս էդ-Դինի հետ իրականացնում է հեղա-
շրջումը²։

Ռազմական հեղաշրջման միջոցով կենտրոնացված ուժեղ
իշխանություն ստեղծելու անգլիական իմպերիալիստների քա-
ղաքականությունը ստաղին հերթին սողված էր նպոմոթեր-
յան Սոցիալիստական Մեծ սեղանցիայի անմիջական ազդե-
ցութեան ներքո Իրանում ժալվալված ազգային-ազատագրա-
կան հզոր շարժման դեմ։ Այդ մասին նախպես վկայում են
ինչպես հեղաշրջման մասնակիցները, այնպես էլ բազմաթիվ
հեղինակներ։

«Թայմզս-ի թղթակիցը թեհրանից այլ օրերին հարտ-
րում է, որ երբ լուր ստացվեց կոզակային զորամասի՝ Դազիլ-
նից թեհրան շարժվելու մասին, շահի կողմից Մոսկոյ օլ-
Մուլը և պրեմիեր Սեփազարի կողմից Այդեր էս-Մալիսանն
անգլիական միտալի ներկայացուցիչների հետ գնացին դեպի
Մեհրաբադ՝ Ռիզա խանի հետ հանդիպելու և նրա ամադրո-
թյունները խմանալու համար։ Բանակցությունների ժամա-
նակ Ռիզա խանը հայտնում է, որ նա մտաղիր է մալրաքա-
նակ գրավել զինված ուժերի և ստեղծել այնպիսի ուզ-
մական իշխանություն, որը ընդունակ կլինի մալրաքաղաքը
պաշտպանել անգլիական զորքերի հետագանի հետո։ Ենա
հայտարարեց,—գրում է թղթակիցը,—որ ինքը թուշեկիների
թեշամին է և անգլիացիների կողմնակիցը³։ Մասնով Սելիգ
Ջիս էդ-Դինի հետ այդ դիւզացիայի աննցած հանդիպման
մասին, Բալֆորը գրում է, որ Սելիգ Ջիս էդ-Դինը հայա-
նեց, որ կոզակները, շալվատիցայի լինելով բուշեկիների և
նրանք իշխանության իսկական քնուկթին, թեհրան են եկել
ցրելու այդ կապակցությամբ թեհրանի ժողովրդի աննցած
մասին մի պատրանք։ Վերջում Ջիս էդ-Դինը ավելացնում է,

¹ Հոսեյն Մաքքի, առաջին հատոր..., էջ 21:

² Հոսեյն Մաքքի, երկրորդ հատոր..., էջ 26—28:

¹ Տիս Բանաթ... էջ 62:

² «Times», 1921, 25. febr.

որ կողմաները «նախատարիմ են շահին և բարեկամ անդ-
լիսացիներին»¹:

Անդրազգանոցով անդլիական իմպերիալիստների հե-
տապնդած նպատակներին, Արդուլլա՝ Մասթոֆին նշում է, որ
«Նեղիստամանի, այց հին ստիբերի գաղութի, Միջագետքի,
պատերազմի այց նոր որսի պաշտպանության համար, զեւ-
ռչին էլ որ մասովն, և իրականում բուշեիզմի դեմ սանդո-
ված պատը Իրանի կողմից բաց էր մնում: Վստոյ էլ-Պոլեի
պայմանագրերը և Իրանի ֆինանսները, ազմիրխարսցիտի ու
բանակի նվաճումներ իրավաճեղճներ ձեռք բերելը, որ պետք է
պատի այլ ճեղքը փակեր, իրանցիների կողմից չընդունվեց
և նրա իրազգրծումը մնաց բաց: Սերեմա քնչ պետի անել, որ
Նեղիստամանը և Միջագետքը բուշեիզմի տարածումից սպա-
նով լինեն: Պետք է Իրանում պետական հեղաշրջում կազ-
մակերպել և այլ կերպի համար մի դեմաւստոր սանդոճել, որս
հենց իրանցիների գրամով և ուժով բուշեիզմի շարքը սանդո-
ված պատի այց ճեղքը փակել»:

Գրաւթյուն անի նաև իրանական հարսնի քաղաքական
գործիչ Ազգարանի այն փկալթյանը, որ հեղաշրջումից զեւ-
որոշ մասանակ առաջ Ռիզա խանը նրա մտա գնալով՝ առա-
ջարկել է միտանի աշխատել և իշխանութիւնը գրաւել, քա-
նի որ, ինչպես նա հարաբարել է, փակեմում է Իրանը բուշ-
եիզմին»²: Նախք է մասանշում նաև Դեմիլը, որ գրում է,
այց «հեղաշրջումը սողոված էր բուշեիզմի դեմ»³: Մերսոց-
նելով անդլիական իմպերիալիստների գաղութարարական
քաղաքականութիւնը և Իրանում հետապնդած նրանց նպա-
տակները, Մոխիթարին նշում է, որ անդլիացիները Իրա-
նում մի քանի նպատակ էին հետապնդում. նախ՝ անասու-
կան և նյութական աճը շահելը, որ ստանում են հարաւի նալ-
թից, «նախնշահին բանկից և անտարական շուկաներից, կեր-

բարը՝ Իրանի կողմից Նեղիստամանի պաշտպանութիւնը սա-
տական բուշեիզմից, կերպով՝ իրանական ժողովրդի մեջ բուշ-
եիզմի գաղափարների տարածման առաջն ամենը: Անա
այս նպատակները իրականացնելու համար էր, որ անդլիա-
ցիները սազմական հեղաշրջում են կազմակերպում: Այնու-
հետև Մոխիթարին ալեւանում է, որ Ռեհրանում շարք և
թագածաւանը անգլիկ էին հեղաշրջման նախապատրաստու-
թիւնը, բայց հայտնի չէ, թե որքան էին անգլիկ նրա մա-
նասանութիւններին: «Մի բան հարսնի է, — գրում է Նեղի-
սուկը, — այն, որ նրանց գիտահեղաշրջել էին, թե հեղաշրջումը
ոչ մի կերպ չի խանդարի նրանց թագավորութիւնը, այ այն
կատարվում է մի ուժից կատարվարթյան սանդոճելու համար,
որը կիրառանա բուշեիզմի գաղափարի ազդեցութիւն տա-
րածման առաջն ամենը, մի գաղափար, որով մտերըր խառ-
րեն գրաւված են»⁴:

Բահարը՝ ընդլով պատմութուն Շահրիվարի մի փկալ-
թիւնը, նշում է, որ նախքան հեղաշրջումը Ռեհրանում անդ-
լիական զեւպան նորմանը՝ շահի հետ հանդիպելով, խոսեց
«հեղաշրջման և ամեկ ու կայան իշխանութիւն սանդոճելու
մասին, որը կիրառանա Ռեհրանի անարխիստին՝ կոմանիզմի
գաղափարի տարածման ավանդարդին, վերջ ապ և ուժեղ
դիմադրական կատարութիւն սանդոճելը»: Մոսկով Սելիկ Ջիլ
էլ-Դինի մասին, Բահարը ալեւանում է. «Սելիկ Ջիլա էլ-
Դինը կոմանիզմի դեմ պաշարելու համար սանդոճեց»⁵:

Սելիկ Ջիլա էլ-Դինի կատարվարթիւնը իր սանդոճման
առաջին իսկ օրից դիմեց մի շարք միջոցառումների, որնեք
նպատակ էին հետապնդում ժողովրդին ապ ապ, որ նոր
իշխանութիւնը ազգալին բնույթ անի, որ նա թշնամի է
անդլիացիներին և կողմնակից Մուլնաական Ռասասամանի հետ

¹ حبيب الله مختاری تاریخ بیداری ایران تیران ۱۹۴۷
Հալիբուլլան Մոխիթարի, Իրանի դարձմաքի պատմութիւնը, Ռեհրան,
1947, էջ 250):

² Նախն սեղում, էջ 224:

³ Բահար..., էջ 69:

⁴ Նախն սեղում, էջ 65:

¹ J. M. Balfour..., էջ 224:

² Արդուլլա՝ Մասթոֆին..., էջ 191—192:

³ Բահար..., էջ 61:

⁴ A. Dennis, The Foreign Policies of Soviet Russia, N. Y., 1923,

էջ 243—224:

հարաբերությունների նորակայումանք, և վերջապես նա մատուցիր է մի շարք արձատական ակֆորմներ անցկացնել է երկրի օդայինական և անասնական տարրեր բնազդականներում: Բայց փաստերը ցույց են տալիս, որ այլ բոլոր միջոցառումները զեմագրոլի բնույթ էին կրում և նպաստել ունեին շեղել հասարակական կարծիքը և ամրացնել կառավարության զերքերը: Այլ մասին են վկայում նաև բազմաթիվ աղբյուրներ:

Այլու Ջիա էջ-Դինը, օրինակ, իշխանությունը իր ձեռքը վերցնելուց հետո մի շարք ձեռքարկություններ կատարեց: Ձեռքարկյալանների մեծ մասը սինպիսի քաղաքական գործիչներ էին, որոնք հայտնի էին անդլիտական խմբերիսյաական շրջանների հետ իրենց ունեցած կապերով: Բայց անդլիտական զեմագրոլները զիմեց կառավարությունը այլ մարդկանց ազատելու համար: Այլ մասին հանգամանորեն խոսում է Մարքին¹:

Անունհատ Ջիա էջ-Դինը հրապարակեց լայնածավալ զեմագրոլի մի զեկարտցիա, որի մեջ խոստանում էր պարար սկսել ընդհանր Ժողովրդի արյունը խորդ արիստոկրատիայից, անցկացնել համազգային ամենալայն հողային ակֆորմ² պետական հողերի բաժանման, զրուղացիների բերքաբաժանի նշանակալից ավելացման, կարվածատերերի և զրուղացիների միջև Ժողովրդային հարաբերությունների հաստատման եղանակով, հիմնական բարեփոխում մացնել հարկային սխտեմում, մեծ չափով գորգացնել ժողովրդական լուսավորությունը, Երիտասարդ սերնդին զատախարակել զեմոկրատական ողովն, գորգացնել ժողովրդական արդյունաբերությունը, ստեղծել և տրանսպորտը և վերջուպես ստեղծել հզոր ազգային բանակ, երկրի անվտանգությունը ապահովելու և Երանի ներքին գործերին ստարներին միջամտությունը վերջ տալու համար:

Բոլոր այս խոստումները նպատակ ունեին սերբաշակ աշխատավոր լայն մասաներին, թուլացնել ազգային-ազա-

տագրական շարժումը և ժողովրդին շեղել սեուլայրին պարարից: Ինձագրոլի այլ միջոցառումների զագաթնակիտը հանդեսացավ փաստորեն արդեն զուլթիտուն շունեցող անգլու-իրանական 1910 թ. պայմանագրի շեղյալ հայտարարելը:

Այլու Ջիա էջ-Դինի իշխանությունը երկար չտևեց: Ինչպեքը ընթանում էին մեծ արագությամբ: Բնհրանում տեղի ունեցան մի շարք քաղաքական իրադարձություններ: Այլ ամենի վախճանը կղավ այն, որ ազգային-ազատագրական շարժումները արդեն մեջ խեղդեցվեցին և հաստատվեց Միդախանի զեկատարան, որը տեղյ մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը:

* * *

Այժմ մեզ մնում է անդրադառնալ մի կարևոր հանգամանքի ևս: Անգլո-իրանական պայմանագիրը և իրանական կառավարության հակասովետական քաղաքականությունը, ինչպես ասվեց, մեծ բողոք առաջացրին ամբողջ Իրանում: Իրանի անմիջական հարեանություն մեջ զանող Անգլոսովետական այլ ժամանակ խաշոր իրադարձություններ էին տեղի ունենում, որոնք չէին կարող իրենց հետևանքները չունենալ Իրանի քաղաքական կյանքի վրա: 1920 թ. ապրիլի 27-ի լույս 28-ի զեկերը Բաքվի պողեատերիտար և Ազրբեջանի աշխատավորները զեմում ապստամբություն բարձրացրին մուսավաթական լծի զեմ: Անհին անմիջական ցուցումով Ազրբեջանի ապստամբած ժողովրդին օգնություն կելավ 11-րդ Կարմիր Բանակը՝ Օրդոնիխիձի, Կիրովի և Միլիանի զկառավարությունը: Կարմիր Բանակի եղբայրական աշխատակցությունը օգնեց Ազրբեջանի աշխատավորներին ամօխու տապալել բուրժուա-կալվածատերական լուծը և Ազրբեջանում Սովետական իշխանություն հաստատել:

Մոլեական կարգերի հաստատումը Ազրբեջանում մեծ ազդեցություն ունեցավ օտարերկրյա և ներքին շահագործողների լծի տակ տոռապող Իրանի ժողովրդայնեի վրա: Երկրի զանազան վայրերում ողջունեցին հարեան ժողովրդի ազատագրման փաստը:

¹ Հոսեյն Մարքի..., էջ 228:

Իրանական կառավարությունը զեպերի զարգացման ճնշման ներքո ստիպված եղավ ընդատանջել ժողովրդական մասսաների բուռն ցանկալիքները և ՌՄՖՄԻ ու Ազգրեշանի Մոսկովական իշխանության հետ զիջանաչարական հարաբերություններ հաստատելու անուշարի անկը։ Այս կապակցությամբ 1920 թ. մայիսի 20-ին նա մի նստու է ուղարկում Մոսկվա, որով ճանաչում է Ազգրեշանի Մոսկովական իշխանությունը և ստաշարկում է զիջանաչարական հարաբերություններ հաստատել ՌՄՖՄԻ ու Մոսկովական Ազգրեշանի հետ, հարողակցություն բուր ճանաչարաներ բացել, հետագայում կապերը փերակնանցնել և տեսարկուն համաձայնություն կնքել։

Մոսկովական կառավարությունը, որը միշտ էլ ձգանկ էր բարեկամական հարաբերություններ հաստատել Իրանի հետ, արտաքին գործերի կոմիտար Զիշերինի պատասխան նստալով իր պատրաստակամությունը հայանեց հարաբերությունների փերակնանցման մասին։

Մոսկովական հարաբերությունների նորմալացումը ձարտղելու համար անցյալական իմպերիալիստաները ոչ մի միջոցի սուսց կանց չէին սունում։ Այսանց պետք է հիշել զետես սովետա-իրանական բանակցությունների սկզբնական շրջանում սովետական զեպան Կոլոմիցեի ջերանեկց սպանության փաստը, 1918 թ. նոյեմբերի 2-ին Քեհերանի կոտորություն կարողացրություն կողակալին մի շտկաո հարծակից սովետական միտիալի վրա և ձերբակալեց նրա բուր անցյաներին նրանց կանանց ու կերիաների հետ, քայցաստությունը Կոլոմիցեի, որը փերշին պերին կարողացավ թաշերվել։ Ձերբակալվածները հանձնակցին անցյալիցներին և ողարկվեցին Համալան, իսկ հետո Բաղդադ։ Միամամանակ Իրանի մի շարք բաղադներում ձերբակալվեցին սովետական հրապատաները¹։ Այս սրը հարծակրում նախապատրաստել էին անցյալական իմպերիալիստաները² վկայում է սրը ժամա-

նակ Քեհերանում զանձոց ցարական զեպանություն կցորդ նիկիտինը³։

Կոլոմիցեո կրկուրը անգամ Իրան եկավ 1919 թ., քայց սպետասի 18-ին միտիալի մրու անցյաների հետ միտանի Բանդարագլ բողալից ոչ հետո զանձոց վարում շարաններգորեն սպանվեց սովետակցարդիստուն Ֆիլիպովի և նրա բանգալի կողմից։ Արդուլահ Մոսթոֆին իր շիմ կենսալարություն կամ Կաշարների շրջանի հասարակական և սովինիստատիվ պատմությունը սշխատություն միշ, անդալալանալով Կոլոմիցեի սպանությունը, գրում է, Վլասուց էդ-Ռոնի կարինետի սրք բուշեիկյան կառավարությունը Կոլոմիցեին Իրան ողարկեց։ Արը զեպանը Մալանդարանում ոտք զրեց իրանական հողը և 16 հողվածից քայվուցած մի հասալցին ողարկեց Իրանի Արտաքին գործերի մինիստրությունը, որով իրանականցյում էին Բրալինի բուր խոստումները։ Նա պատրաստակամություն հայանեց իրանական կառավարության հետ բարեկամական զաշինք կնքել։ Հայանի է, որ ձալը ցինգարալի պատնաններում և Վրասուց էդ-Ռոնի ցանկությունը, որը Իրանը ստրղղովին զցել էր Անգլիալի գիկրը և զրաղված էր տիրանաչակ պալմոնալրի ստորաղմուն ու իրականացման գործով, և Իրանի տերիտորիան փերածել էր բուշեիկների զեմ անցյալիցների մղած կրիվերի համար զենամիկերը փերակարեոն ճանաչարանի, սրը զեպանին կարվորություն շալեց, մինչև իսկ սշխատեց շերապարակել բուշեիկյան սրը ներկալացուցչի զարը և հասարակությունը ոչ մի անդեկություն շատացած Կոլոմիցեի միտիալի մասին։ Միան ոմանը սշքարնը իմացան, որ Կոլոմիցեի անունով մեկը Մալանդարան է կեկը և սպանվեց մի սղետի ժամանակ, որի կազմակերպչին էլ շճանաչեցին⁴։ Իսկ Արուլֆալը Կասեմին քայցանալու հայտարարում է, որ Վրասուց էդ-Ռոնի ժանցլա-

¹ „Новости“, 11 апреля 1919 г.

1 ۱۹۵۱ تهران که من شناخته ام تهرانی که من شناسیده ام (Ք. Նիկիտին, Իմ ճանաչած Իրանը, Քեհերան, 1931, էջ 219)։

² Արդուլահ Մոսթոֆի..., էջ 180։

դինքին զոր զայս համար ուսումնական կառավարությունն գեա-
պան կողմիցնին խորհրդավոր կերպով ոչնչացրին...»¹

Այս քաղաքականությունը ավելի ամեղ զբնորոշիկ տ-
վետա-իրանական պայմանագրի ստորագրման նախօրյակին,
կերպ անցկացրին և իրանական անակցին շքանկերի մեթո-
նաբնությունների հետևանքով ձգձգվում էին սկսված բանակցու-
թյունները: Լուիս Ֆիշերը, անգղադատնալով այս հարցին,
գրում է, «Ենանական կառավարությունն ուղիղը և ձեռքերը
կապված էին նա զործարարության պարտությունն շունիք ար-
տաքին նարարերություններում և նման պարտաներում Ռու-
սաստանի հետ նարարերությունների վերականգնումը ան-
խմաստ էր»²:

Անգլիական իմպերիալիստներին հարուցած խոչընդո-
տների մասին հետաքրքիր փաստ է հարուրդում Մաքքին:
Նա նշում է, որ մամանական պրնիպը մինիստր Մաշիկը էզ-
Դոլեն մամանավոր խոսակցության ընթացքում պատմել է, որ
կերպ ինքը պոչուց Ասիական կառավարության հետ բարե-
կամական հարաբերություններ հաստատել և այդ կապակցու-
թյամբ արդեն բանակցություններ էին սկսվել Մոսկովում,
հանկարծ անգլիական իշխանությունները կազմից խիստ
ստարակություն եղավ: Անգլիական զեկապանությունը բանակ-
ցությունների մասին Լոնդոն էր զեկուցել, իսկ Լոնդոնը հա-
կուտակի էր, և հենց այդ օրից միջոցները էին դիմել Մա-
շիկը էզ-Դոլեն կառավարությունը առաջադրելու ուղղությամբ:
Այն բանից հետո, կերպ Մաշիկը էզ-Դոլեն բանակցությունները
շարունակելու համար Մոսկովա ուղարկելը Մոշային օչ-Մամա-
նիցին, անգլիացիները զվոնեցին նոր խորանակություններ:
Զգալով, որ Ասիական Ռուսաստանի հետ Իրանի հարա-
բերությունների վերականգնումը հանդիսանում է ժողովրդա-
կան մասսաների բռուն ցանկությունը, անգլիացիները լուրիք
ստարածեցին, թե Մաշիկը էզ-Դոլեն թշնամական քաղաքականու-
թյուն է վարում Ասիական Ռուսաստանի նկատմամբ և

մաաղիք է լրջորեն պայքար սկսել վերջինիս դեմ: Անգլի-
ացիների կազմակերպում այդ պրովոկացիան այնքան լայն տա-
րածում գտավ, որ Մաշիկը էզ-Դոլեն ստիպված եղավ հանդես
գալ հաստակ հայտարարությամբ, որով ժողովրդին հայտ-
նում էր Ասիական կերպի հետ բարի զբաղման և բա-
րեկամական հարաբերությունների ստեղծելու համար կառավա-
րության վճարման մասնադրություն մասին³:

Վերջապես, ինչպես հայտնի է, անգլիացիների այդ մե-
քնակությունները շահի վրա բանեցրած ճնշումը, Դազդի-
նից անգլիական ուժերը հետ քաշել և Գիլանի սեպուղի-
ությունների առաջ զեպի Քեհնան աստուղ ճանապարհը բացելու
սպանակները, հասան իրենց նպատակին և Մաշիկը էզ-Դոլեն
կառավարությունը հրաժարվեց⁴: Սակայն նրանք չկարողացան
վերջնականապես վիժեցնել բանակցությունները: Համաու-
սաստանյան Ասիական կառավարումը, 1920 թ. դեկտեմ-
բերի 22-ին Վ. Ի. Լենինը իր զեկուցման մեջ, խոսելով Արե-
վիկյան սովետական քաղաքականության հարուցությունների
և սովետա-իրանական բանակցությունների մասին, ասա-
ցել էր պետք է նշել նաև, ընդհանր, որ Արևելքում միք քա-
ղաքականությունը այս սարվա ընթացքում խոչոր հարուցու-
թյուններ սնեցավ...

Մենք կարող ենք որչանակ նաև պայմանագրի առաջե-
կա ստորագրումը Պարսկաստանի հետ, որի հետ բարեկամա-
կան հարաբերություններն ազանովված են շնորհիվ այն հան-
գամանքի, որ իմպերիալիզմի ճնշումից առատալող բուր ժո-
ղովրդների արմատական շահերը զուգապեպում են⁵:

Մի քանի ամիս անող բանակցությունները ավարտվե-
ցին հարուցությամբ. 1921 թ. փետրվարի 26-ին Մոսկովայում
ստորագրվեց սովետա-իրանական պայմանագրերը, որը մինչև
այժմ էլ կրկն կերպներին հարաբերությունների հիմքն է կա-
ռման: Այդ նույն օրերին էլ շեղյալ հայտարարվեց անգլո-իրա-
նական ստրկացուցիչ պայմանագրերը:

¹ Երովիպոլ Կոստեխ..., էջ 158:

² Louis Fisher, The Soviet in World Affairs, London, 1930, v.01.

1, էջ 280:

¹ Լուսին Մաքքին..., էջ 36—38:

² Լուսին աղալում, էջ 43:

³ Վ. Ի. Լենին, Երկեր, 5. 31, էջ 610:

1921 թ. սովետա-իրանական պայմանագրերը հանդիսա-
նում է լինիլյան աղաչվին քաղաքականության կրօնի ար-
տասարտությունը Պայմանագրի առաջին հոդվածում տալով
էր. «Ռուսական Սովետական կառավարությունը՝ պարսկական
մողովրդի նկատմամբ Ռուսաստանի քաղաքականության հի-
մունքների մասին իր դիկլարացիաների համաձայն, որոնք
չարարված են 1918 թ. հունվարի 14-ին և 1919 թ. հունիսի
26-ի նոտաներում, մի անգամ և հանդիսավոր կերպով հաշ-
տարարում է, որ Ռուսաստանը անշեղ կերպով հրաժարվում է
Պարսկաստանի նկատմամբ ցարական կառավարության իմ-
պերիտլիստական քաղաքականությունից, մի կառավարու-
թյուն, որը առաջադիվ է Ռուսաստանի գյուղացիության և
բանվորների կամքով: Դրա համաձայն էլ, ցանկանալով
պարսիկ ժողովրդին սեանել նախքան, ծաղիկը և ագաս...
սնչազգլած է համարում բոլոր ցարական նախկին արևակաս-
ները, պայմանագրերը, կառվեցիկները և համաձայնություն-
ները:»

Յարման կառավարությունը բոլոր այն պայմանագրերը
և համաձայնագրերը, որոնք կնքվել էին որևէ կերպով պե-
տության հետ, բայց ի մաս կրանական ժողովրդի սովերե-
նաթյան, նույնպես չեղավ հայտարարվեցին: Սովետա-իրա-
նական այս պայմանագրով Սովետական կառավարությունը
կամավոր կերպով և առանց փոխհատուցման հրաժարվեց
Իրանում ցարական Ռուսաստանի ունեցած զանազան հանքե-
րի, նավթի, ճանապարհների և այլ մենաշնորհներից, այն է
Ռուսաստանի կողմից կառուցված հնդկըլե-Թևհրան և Ղազվին
— Համազան խնողիներից, Ջուլֆալից Քավրիզ և Սոֆիա-
լից մինչև Ուրախ լեճը գնացող երկաթգծերից՝ բոլոր
չինություններով, շոգեբարեղսով, վազոններով և քնակարան-
ներով հանդերձ: Անվերադարձ կերպով իրանական ժողովուր-
դին արվեցին Ուրախ լճի նավահանգիստները, շոգենավերը,
նավերը, նրանց պատկանող բոլոր շինքերը, ինչպես և էն-
դյուրի նավահանգիստը իր ապրանքի շտմարաններով, էլեկ-
տրակայանով և արևը շինքերով: Իրանին արվեց նաև Մաշ-
հազ—Սիրասն և Գորգան նահանգի հնագրաքոծները և այլն:

Սովետական կառավարությունը Իրանին հանձնեց 64 միլիոն
սովի առբլի արժեքող վարկեր բաց թողնող բանկը իր բո-
լոր շարժական ու անշարժ գույքով: Տրամաբյաց ցարական
կառավարության Իրանին տված 70 միլիոն սովի առբլի
պարտքից, ինչպես և այլ պարտք տպահովող Իրանի պե-
տական գործերի մեջ միջամտելու իրավունքից: Սովե-
տական կառավարությունը հրաժարվեց նաև Իրանի անկա-
խության և սովերենության հետ չհամաանող էքստերիտու-
րիալ կապիտուլյացիոն իրավունքներից:

Պայմանագրի համաձայն կրկն կողմերը խոստանում
էին չմիջամտել միեմանը ներքին գործերին և պայմանավոր-
վում էին թույլ չտալ իրենց երկրում մյուս կողմի նկատ-
մամբ թշնամական կազմակերպությունների գոյությունը:

Սովետական ահմանները նկատմամբ օտարերկրյա իմ-
պերիտլիստների նարարող աքերիսիան կանխելու համար պայ-
մանագրում մտցվեց մի կարևոր հոդված՝ Ծ-րց հոդվածը, որ-
տեղ տալով էր, որ օտարերկրյա իմպերիտլիստների կողմից
Սովետական պետության նկատմամբ Իրանում վտանգ ստեղծ-
վելու պարագային «Սովետական Ռուսաստանի կառավարու-
թյունը իրավունք կունենա իր զորքերը մտցնել Իրանի տե-
րիտորիան, որպեսզի ինքնապաշտպանության նկատառու-
մներով անհրաժեշտ սպառնական միջոցառումներ կիրառվի...»:
Իսկ վսանցի վերացումով Սովետական կառավարությունը
պարտավորվում էր իր զորքերը գուրա բերել Իրանի տե-
րիտորիայից:

Սովետական կառավարությունը այլ պայմանագրով
ցույց տվեց, որ պատրաստ է անկեղծություն և իրավահա-
վասար կերպով ոգնել Իրանի քաղաքական ու անասական
պարագայանը: Իրանին պարտագրված ցարական Ռուսաս-
տանի ծանր պայմանագրերի չեղյալ հայտարարելը, ինչպես
և Իրանում Ռուսաստանի ունեցած բոլոր արտակարգ արտու-
սություններից հրաժարվելու առաջիկ մեծ նշանակություն ու-
նեկին հենց այդ ժամանակ, երբ Իրանը սկսապացված էր անգլ-
լիացիների կողմից և իմպերիտլիստական պետությունները
ուզում էին նրան վերածել իրենց գաղութի: Սովետական

կառավարության նման վերաբերմունքը Իրանին ճնարարությունն ալիք ճանաչվել որպես անկախ պետություն:

Իրանի նկատմամբ Սովետական Ռուսաստանի վարած քաղաքականությանը բարձր գնահատական է ապրիս Հուսեյն Մաքքիսը. «Սովետական կառավարության նոր քաղաքականությունը,—գրում է նա,—ամբողջովին հակառակ էր ցարական Ռուսաստանի կառավարության քաղաքականությանը, այն իմաստով, որ Սովետական կառավարությունը իր արագճին քաղաքականության հիմքում դրել էր հարեան երկրների անկախության և թույլ ժողովուրդների հովանավորություն սկզբունքը և ցանկանում էր ցարական Ռուսաստանին իշխանության կեղեքումները փոխհատուցել»¹:

Սովետա-իրանական պայմանագրերը մեծ արձագանք գտավ իրանական հասարակության լայն խավերում: Իրանի ժողովրդական մասսաները ուղռնակեցին սրբ պայմանագրերը, երկրի դանազան վայելքում տեղի անցնեց միտինգներ և ցույցեր, որտեղ աշխատավորները՝ նշելով պայմանագրի վիթխարի նշանակությունը Իրանի հետագա զարգացման համար, իրենց խորին երախտագրությունն էին հայտնում Սովետական կառավարության մարդասիրական վերաբերմունքի և զաղտնալին ու կախյալ երկրների ժողովուրդներին ինպես-րիսխատական լծից ազատելու գործում ցուցաբերած օգնության համար: Գնահատելով սովետա-իրանական պայմանագրերը, իրանական «Ռեհնեմա» թերթը գրում էր, որ հյուսիսից ճառագայթած կալծերը լուսավորեցին Իրանի մթնադեղած քաղաքական հորիզոնը և «թույլ տվեցին մեզ ավելի լավ տեսնել իրավիճակը, ընտրել մեզ համար ամուր և ավելի փեսանելի կուրս»²:

Հարիբուլա՝ Մոլոխարին իր «Իրանի զարթոնքի պատ-

մունքները աշխատության մեջ գրում է, որ սովետա-իրանական պայմանագրի ստորագրումը «Ազգաշնորհների մեջ գրական անդրադարձում ունեցավ և ամեն տեղեց ու բոլոր քաղաքներից ուրախության և հավանության արտահայտություններ լավեցին...»³: Մի ուրիշ տեղ նկատեցի գրում է. «Ռուս-իրանական պայմանագիրը սոցիալիստական ոգին դե-վիտաի պես հյուսիսից դեպի մեր երկիրը փչեց և, բացի մի խումբ մարդկանցից, բոլորին զարժեց Ռուսաստանի լարե-կամբ և Անդլխալի հակասիրքը»⁴:

Սովետական Ռուսաստանի նկատմամբ իրանական ժո-ղովրդի սիրտ և հարգանքի այդ զգացմունքները մեծապես անհանդուստեղում էին անդլիական իմպերիալիստներին, որոնք ցանկանում էին Իրանը պահել կախյալ վիճակում: Բերնեք մի քանի փաստեր:

Անգլիական «Նեյշն» ժուռնալը գրում էր. «Ռուսաստանը վալելում է հիմա իր ինքնազոհողության պտուղները, քանի որ նա հրամարվեց ամեն ինչից՝ կոնցեսիաներից, ճանա-պարհներից, հեռագրատներից և բանկերից, ոչ մի կողմի հատուցում չզանաչելով կորստի համար. այդ ամենից հետո մեզ դժվար է մեր շահերը պաշտպանել: Դրա հետևանքով էլ սուսական ազդեցությունը բավականին աճեց, մի ազդե-ցություն, որը հիմնված է պարսկի ժողովրդի բարբալակամու-թյան վրա»⁵:

Սովետա-իրանական պայմանագրի ստորագրումը շփո-թության տուալ ընրեց Անգլիայի զեւալումը շրջաններում: Դա իր արտահայտությունը գտավ թև լրբղերի պաշտոնի վեճե-րում, որտեղ քննարկվում էր սովետա-իրանական և անգլո-իրանական պայմանագրերի հարցը, և թև Մեծ Բրիտանիայի մի քանի քաղաքական գործիչների արտահայտությունների մեջ: Օբիեակ, Անգլիայի այն ժամանակվա արտաքին գոր-

¹ حسین مکی تاریخ بیست ساله ایران جلد دوم مقدمات ۱۹۶۷ تغییر سلطنت تهران ۱۹۶۷ (Հուսեյն Մաքքիս, Իրանի քսանամյա պատմությունը, Կ. Ս, Գինաստիայի փոփոխում սկիզբը, Թեհրան, 1946, էջ 3):

² История дипломатии, том третий, Москва, 1945, стр. 108

³ حبيب الله مختاری تاریخ بیاداری ایران تهران ۱۹۶۷ (Հարիբուլա՝ Մոլոխարի, Իրանի զարթոնքի պատմությունը, Թեհրան, 1947, էջ 209):

⁴ Նույն տեղում, էջ 213:

⁵ «Бюллетень НКВД», 25 июля 1921 г., № 96, стр. 34.

մերի միջնորդ Քերզոնը, 1921 թ. մարտի 2-ին հանդես գալով լրագրի պաշտոնով՝ Իրանում ստեղծված դրոշմային կապակցությունը, հարտարարեց. «էթև մեծահարգ լրագր հարցնում է, թե ինչպես եմ ես գնահատում ստեղծված դրոշմայինը, ապա ես ստիպված եմ խոստովանել, որ ես նախում եմ հրաժարվելուս զգալունորով, համարյա թե հուսահատանքով: Հարող Արևելյան Քերզոնի մտանքը երբ որ հարցում մանրամասն պատմում է, թե ինչպիսի սպառնալիքներն ինչպե՞ս Քերզոնի վրա Իրանում առաջացած նոր իրադրությունները: Վստիտեղծությունները, գրում է Արևելյանը, հարմար չեն մասնանակ բրիտանական կառավարության ձեռքում չէր... մեր հեղինակությունը ընկած էր: Ես (Ռուսաստանը—Լ. Ն.) իր հովանավորությունը էր ստաջարկում Իրանին, դադարեցնում էր բոլոր անոթ կոնցրեսիաները և վերացնում կապիտալացիոն իրադրությունը: Իսկ Պերսի Սալթը «Քալանդ» թերթում գրում էր. «...Հարգապարտ է պատկերը այդքան մառայ լինում, որքան նա մառայ է արված»:

Քերզոնի վերոհիշյալ կուլմբը խոսորեն զննադատում է իրանական «Մեխթարեկ Իրան» թերթը: Մերկայցնելով անդլո-իրանական պայմանագրի իմպերիալիստական, դադարեցնողական նպատակները և պատասխանելով Քերզոնի կուլմբին ալն մասին, որտեղ նա դրավադարեն մեղադրում է Սովետական Ռուսաստանի քաղաքականությունը Իրանի նկատմամբ և հեղինակը թույլ է արտահայտվում սովետա-իրանական պայմանագրի մասին, թերթը գրում է. «Արդյոք կարելի՞ է հեղինակն ամենակի պիմանալ և հարավիրանական գործարարի կողմակիքումն ու 1919 թ. պայմանագրի կնքումը համարել «օգնություն ձեռք», իսկ աստ-իրանական պայմանագրի 25 կետերը և ցարական ռեժիմի բոլոր անօրինական իրադրությունների րեկանումը... «Ռուսաստանի շղթումը», լրաց մենք այդքան հիմար չենք, որ չհասկանանք այն ստորերկրությունը, որ գործընթացն ունի Ռուսաստանի հետ մեր կնքած

պայմանագրի և անդլո-իրանական համաձայնագրի միջև, մի համաձայնագիր, որը անգլիական գաղութային քաղաքակրթության վառ օրինակ էր հանդիսանում և նպատակ ուներ սնչւաջանել մեր ազատությունը: Մենք Սովետական Ռուսաստանի հետ քաղաքական և նրախական տարածախոսություններ չունենք...»:

«Սեպտեմբեր» թերթը գրում էր, որ Սովետական Ռուսաստանի հետ կնքած նոր պայմանագրեր պետք է զատ հանդիսանա Անգլիայի համար: Խոսելով նոր Ռուսաստանի նոր քաղաքակրթության և Իրանի նկատմամբ նրա ցուցարկած վերաբերմունքի մասին, իրանական «Գուշան» թերթը նշում էր. «Ես այն սղառ Ռուսաստանն է, որը տա-պաղելով ցարական բուսակալական կարգեր ոչ միայն ինքը պատառադրվեց քմահաճությունների լծից, այլ մինչև իսկ փրկեց իր հարեան պետություններին: Ես այն նախ Ռուսաստանն է, որը սնչւաջանց ցարական կառավարության բոլոր պիշախել կոնցրեսիաները և միանգամայն սովոր կերպով վերադարձրեց գրանք Իրանին: Ես այն Ռուսաստանն է, որը մեկ երարական օգնություն ցուցարկեց և ձգտում է մեկ հետ ապրել խաղաղ և բարեկամ»:

Որ սովետա-իրանական պայմանագրեր խորատակեց Անգլիայի կողմից Իրանի ստրկացման պլանները՝ հաստատում են օտարերկրյա շատ թերթեր. «1921 թ. պայմանագրով,— գրում է խալկյան «Իլ Սեկուլը» թերթը 1921 թ. փետրվարին,— Ռուսաստանը հարվածեց Իրանում բրիտանական հեղինակն հաստատելու պլանին և քաղաքից նրա պերքերը»:

Անգլիական իմպերիալիստների հեղինակության անկումը և Սովետական Ռուսաստանի նկատմամբ սճած համակրանքը, որը մեծ գլավորվել էր սաղաջնում Անգլիայի դիվարյա շղթ-

1 A. Dennis..., էջ 244:

2 Nicholson..., էջ 140:

3 The London Times*, 21 sept. 1921.

1 «Жизнь Национальностей», 26 сент. 1921 г.

2 Nasrollah Saifpour Fatemi, Diplomatic History of Persia (1917—1923), New—York, 1932, էջ 270:

3 Տէ՛ս Հայկական ՍՍԻՂ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ 4/114, գործ 180, էջ 167:

4 «Вестник НКПД», № 7—8, 1921 г., стр. 43.

շանճերում, Քերզնը մեկնաբանում էր որպես Սովետական կառավարության հակամեղքիական պրոպագանդայի արդյունք: Պատասխանելով Քերզնի նման պնդումներին, իրանական «Եթեհազ» թերթը իր 1921 թ. հոկտեմբերի 3-ի համարում գրում էր. «Ե՛րբ կարծում եք, որ Ռուսոշնհն է փոշի միջոցով այդպիսի դադափարներ տարածում: Ոչ, դուք խիստ սխալվում եք, և մենք Ձեզ կասենք, թի ինչումն է հասկապես ձեր սխալը կայանում:

Եթե հնարավոր լիներ գրամով պարսիկներին դադափարներ պարտադրել, ապա պատասխանեք հետևյալ հարցին. ինչու՞ն եղավ, որ երկու տարվա ընթացքում ձեր պայմանագիրը անցկացնելու համար Իրանում չորս միլիոն 800 հազար թաման ծախսելով, դուք չկարողացաք պարսիկներին ձեր կողմ թե՛քել: Եթե իսրայպես հնարավոր լիներ գրամով գնել պարսիկների խեղճք, ապա ի՞նչ գովաբան էր դա ձեզ համար: ՁԷ՞ որ դուք այնպիսի հարուստ եք և այնպիսի լավ եք վճարում, քան արիշները... Եթե մենք հիմա կրքայլաբար ողջունում ենք ազատ Ռուսաստանին, ապա դա չի նշանակում, որ դրա համար մեզ դրամ են վճարում...:

Դեռևս վերջերս, երբ Ռուսաստանը Իրանի ազատության և անկախության թշնամի էր, մենք, ոչ մի բանի առաջ կանգ չառնելով, թշնամարք էինք տրամադրված զեպի հաս, բայց նոր Ռուսաստանը ամեն ձևով ձգտում է մեր երկրի լիակատար անկախության պահպանմանը և ինչքան էլ դուք Մեծ Բրիտանիայի դավաճնելիզ գտլքանաք, այդուհանդերձ մենք իրավունք ունենք ձեզ ասելու, որ ձեր դաման քաղաքակառույթյունը, ձեր գաղտնի ֆոնդերը, ձեր կողմից կազմակերպված հեղաշրջումը, ձեր վրդովեցուցիչ խնայողները, վերջապես այլ ձեր քաղաքատյա կամիանն առիպում են մեզ ձեր նկատմամբ կապիտալիստական և մասկալաթյուն ունենալուս՝:

Սկսելուով ժողովրդական մասսաների կամքով ու ակտիվ պայքարի շնորհիվ 1921 թ. դեկտեմբերի 15-ին իրանական

մեջլիսը միահամուս կերպով գաղիբացրեց սոցիալ-իրանական պայմանագիրը՝

Վերը քննված բոլոր խնդիրներն ու բերված փաստերը, բայց են ապին, որ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ սեկյուցիայի անմիջական արդյացաթյուն ներքո ազգային պատագրական շարժումները հզոր վերիջ ապրեցին ամբողջ Իրանում: Հյուսիսային Իրանի նահանգներում Աղբրեջան, Դիլան և Պարասան) ազգային-պատագրական շարժումները, իրենց լուրահասկաթյուններով հանդիմ, հանդես եկան էլ այնպիսի կազմակերպված ձևով և պակսիցին հաշտակաթյուն, ստեղծվեցին տեղական զեմոկրատական իշխանություններ, որոնք մի շարք պատանաների հետևանքով կարճատև կյանք ունեցան և տապալվեցին անդլիստական իմպերիալիստների ու իրանական սեակցիոն իշխող խափերի հարվածների ապինյա բոլորով հանդերձ սովետական կարգերի հաստատումը Ռուսաստանում և ազգային-պատագրական շարժումների հաշտակաթյունները Իրանում վերացրին անդլիստական սկոպայցիան, երկրում ստանալեցին ֆեոդալիզմի հիմքեր և ուղի հարթեցին Իրանի հետագա դարգացման համար:

¹ «Известия». 14 января 1922 г.

¹ Հայկական ՍՍԽ ԳՆԱ, ֆոնդ 40 Շ/114, գործ 179, էջ 60—61:

ՀԱՄԼԵՏ ՄԱՅՏԱԿԱՆԻ ԷԳԱՆՑԱՆ

ՀՈՒՏԵՐԲԵՐԳԱՆ ՍՈՑԻԱԼԻՏՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈՅՈՒՑԻՑԻՈՒՆ ԷՎ
ԱԶԳԱՅԻՆ ԱԶՈՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐՎՈՒՄՆԵՐԻ ԵՐԱՆՈՒՄ
(1917-1921)

Խմբագիր Բ. Լ. Չուգասոյան
Հրատ. խմբագիր Թ. Մանոյան

Տեխ. խմբագիր Լ. Ազիզբեկյան Սրբազրիչ Թ. Փիլիպոսյան

ԽՀԽ Ձ 431 Հրատ. 1444 Գառգիւր 268 Տիբած 1500 ՎՖ 11031

Հանձնված : տրտադրութեան 25/VI 1937 թ. : Ստորագրված է տպագրութեան 6/VI 1937 թ. : Հրատ. էջ 55 ժամուկ. տպագր. 7 ժամուկ
Քուղք 84/1081₂₅: Գինը 1 ո. 25 կ.:

Հայկական ՍՍԻ ԳԱ Հրատարակչութեան տպարան, Երևան, Արագյան, 124